

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԺԱՄՁ
14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

խորհրդի անդամներ՝

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր (համաձայնությամբ)
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Զ. Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Զ. Հակոբյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների և կոչումների վարչության պետ (համաձայնությամբ)
Կ. Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ
Լ. Մուրադյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ
Ա. Թովուզյան	Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ
Զ. Հասրաթյան	«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ծ. Հարությունյան	ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի գեներալին ծրագրերի պատասխանատու
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ

Ա. Խուղդյան	«Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ (խորհրդի քարտուղար)
Հրավիրվածներ՝	
Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Ն. Գալստյան	ՀՀ վարչապետի օգնական
Ս. Սարգսյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի խորհրդական
Ա. Սորոկին	ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի ղեկավար
Վ. Կարապետյան	ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրեն
Ա. Մեսրոպյան	ՀԲ-ի խմբի անդամ, ՄՖԿ-ի ներկայացուցիչ
Գ. Ղաբուզյան	Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ
Գ. Դալլաքյան	ԱՄՆ-ի ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագրի ղեկավարի տեղակալ
Դ. Մուրադյան	ՓՄՁ ԶԱԿ-ի հասարակության հետ կապերի պատասխանատու
Ա. Մարգարյան	ՓՄՁ ԶԱԿ-ի Հայտերի ընդունման պատասխանատու
Ս. Խաչատրյան	ՓՄՁ ԶԱԿ-ի խորհրդատվական և ուսուցողական աջակցության ծրագրերի պատասխանատու
Հ. Միրզոյան	ՓՄՁ ԶԱԿ-ի սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի պատասխանատու
Ա. Գևորգյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ
Զ. Դանիելյան	«Բիո-Քիմ» ՍՊԸ-ի հիմնադիրների խորհրդի նախագահ, 2012 թվականի «Կին արտադրողի լավագույն ապրանքանիշը» անվանակարգի հաղթող

Ողջունի խոսք

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ողջունելով ներկաներին, սրտանց շնորհավորեց ներկա կանանց՝ հիասքանչ տոների առթիվ: Այդ կապակցությամբ նա ուրախությամբ նշեց, որ հնարավորություն ունենք իրականացնել այնպիսի խրախուսական միջոցառումներ, որոնք դրական ազդեցություն են թողնելու ՀՀ-ում կանանց գործունեության ակտիվացմանը և հասարակության մեջ դերի բարձրացմանը: Նախորդ տարի շնորհված մրցանակները ողջունվեցին և ընդունվեցին հանրության (մասնավորապես կանանց) կողմից: Այդ իսկ պատճառով որոշվեց շարունակել այս գեղեցիկ ավանդույթը: Դրանից բացի՝ ստացվում են բազմաթիվ առաջարկություններ՝ նոր անվանակարգեր սահմանելու և կանանց ակտիվությունը հասարակական կյանքում խրախուսելու վերաբերյալ:

1. «Լավագույն կին-գործարար» 2013 թվականի մրցանակաբաշխության հաղթողներին ՀՀ վարչապետի պատվոգրերի հանձնում

(Դ. Մուրադյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցով ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցիչ Դ. Մուրադյանը ներկայացրեց «Լավագույն կին-գործարար» 2013 թվականի մրցանակաբաշխության արդյունքները: Այսպիսով՝

1) «Լավագույն կին գործատու» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևանից՝ «ՆՈՒԵՎԱ ՎԻՍԱ» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Խաչատուրովան և ՀՀ Լոռու մարզից՝ «Դումիկյան եղբայրներ» ընկերության տնօրեն Մարգարիտա Չոբանյանը.

2) «Լավագույն կին նորարար նախաձեռնող» անվանակարգում հաղթող են ճանաչվել «Արլիան» խորհրդատվական կենտրոնի տնօրեն Արևիկ Սարգսյանը և ձեռակերտ բնական օճառների արտադրությամբ զբաղվող Նելլի Ավետիսյանը.

3) «Լավագույն կին բարեգործ» անվանակարգում հաղթող են ճանաչվել ՀՀ Լոռու մարզից՝ «ԻՆՍԻ-ՆՏԿ» ՓԲԸ-ի տնօրեն Զարուհի Անդրիասյանը և ՀՀ Գեղարքունիքի մարզից՝ Սևանի մանկապատանեկան կենտրոնի ղեկավար Անուշ Բադայանը.

4) «Կին արտադրողի լավագույն ապրանքանիշը» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևանից՝ «Ատեքս» նորաձևության կենտրոնի տնօրեն Կարինե Դնոյանը և Լոռու մարզից՝ «Ռուզ-Դան» ՍՊԸ-ի տնօրեն Ռուզաննա Դանիելյանը.

5) «Լավագույն երիտասարդ կին գործարար» անվանակարգում հաղթող են ճանաչվել Երևանից՝ դիզայներ-մոդելավորող Արևիկ Սիմոնյանը և ՀՀ Սյունիքի մարզից՝ «Բասեն» ընկերության ղեկավար Հասմիկ Ազոյանը.

6) «Լավագույն սկսնակ կին գործարար» անվանակարգում հաղթող են ճանաչվել ՀՀ Կոտայքի մարզից՝ հացամթերքի արտադրությամբ զբաղվող անհատ ձեռնարկատեր Սեդա Աֆյանը և ՀՀ Գեղարքունիքի մարզից՝ մակարոնեղենի արտադրությամբ զբաղվող Աննա Գաբրիելյանը:

2. Հատուկ մրցանակներ

(Վ. Ռազլոզ, Տ. Սարգսյան)

Հայաստանում կանանց ձեռնարկատիրական գործունեությունը և նախաձեռնողականությունը խրախուսելու, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումների գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով հատուկ մրցանակներ հանձնեցին նաև միջազգային կազմակերպությունները: Մասնավորապես՝

1) **ԱՄՆ-ի ՄՁԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» ծրագրի ղեկավարի տեղակալ Գ. Դալլաքյանը** «Կանայք բիզնեսում» նոր նախաձեռնված ծրագրի շրջանակներում մրցանակ հանձնեց ծրագրի մասնակցության վկայականներ 12 հաղթող կանանց և որպես լրացուցիչ մրցանակ՝ հետևյալ 3 կանանց՝

ա. Մարսելլա Խուրշուդյան՝ ՀՀ Կոտայքի մարզ, ծնեբեկի արտադրություն,

բ. Մարիա Բաղդասարովա՝ քաղաք Երևան, «Սոսա Արտ Ստուդիո» ՍՊԸ,

գ. Քրիստինա Անտոնյան, ՀՀ Արմավիրի մարզ, հյուրատնային գործունեություն.

«Կանայք բիզնեսում» նոր նախաձեռնված ծրագիրը կմեկնարկվի 2013 թվականի ապրիլ ամսվա վերջին: Ծրագրի մեկնարկից առաջ կկազմակերպվեն նաև կլոր սեղան քննարկումներ.

2) **ՀԲ-ի խմբի անդամ, ՄՖԿ-ի ներկայացուցիչ Ա. Մեսրոպյանը** իրենց կազմակերպության անունից հավաստագրեր և նվեր-քարտեր հանձնեց ՀՀ Սյունիքի մարզից Լարիսա Հակոբյանին և Երևանից՝ Հասմիկ Բարխուդարյանին.

3) **ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի ղեկավար Ա. Սորոկինը** իրենց կազմակերպության կողմից պատվոգրեր և նվերներ հանձնեց «ԱՏԵԼՅԵՐ Ա-ՊՐՈՖԵՇՆԼ» ՍՊԸ-ի տնօրեն Մաղլեն Խաչատրյանին, Անահիտ Գյուլբուրադյանին, Հրանուշ Եղոյանին .

4) **Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչ Գ. Ղաբուզյանը** իրենց կազմակերպության անունից խրախուսական պատվոգրեր և նվեր-քարտեր հանձնեց Երևանից՝ գեղանկարիչ, դիզայներ Լիլիթ Մարգարյանին և ՀՀ Արարատի մարզից՝ լատինամերիկյան պարի խմբի հիմնադիր Շողեր Զաքարյանին:

5) **ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրեն Վ. Կարապետյանը** պատվոգրեր հանձնեց մրցանակաբաշխության միջոցառման լուսանկարիչ Նարե Մկրտչյանին և «ՎԱՍԿՈ ԴԵ ԳԱՄԱ» տուրիստական գործակալության տնօրեն Տաթևիկ Հարությունյանին:

3. «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» 2013 թվականի մրցանակաբաշխության հաղթողներին ՀՀ վարչապետի պատվոգրերի հանձնում

(Ա. Գևորգյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցով ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ա. Գևորգյանը ներկայացրեց 2013 թվականի՝ քաղաք-գյուղ կտրվածքով մրցանակաբաշխության արդյունքները: Այսպիսով՝

1) «Քաղաքի հիմնարկների և կզմակերպությունների ղեկավարների տեղակալների գենդերային կազմը, գենդերային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում» անվանակարգում հաղթող են ճանաչվել՝

ա. ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքային համայնքի ղեկավար Ռուբեն Խլիլայանը (3-րդ մրցանակ),

բ. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքային համայնքի ղեկավար Կարեն Գրիգորյանը (2-րդ մրցանակ),

գ. ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքային համայնքի ղեկավար Հակոբ Շահգալոյանը (1-ին մրցանակ):

2) «Գյուղական համայնքներում հիմնարկների և կզմակերպությունների ղեկավարների տեղակալների գենդերային կազմը, գենդերային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում» անվանակարգում հաղթող են ճանաչվել՝

ա. ՀՀ Շիրակի մարզի Ամասիա գյուղական համայնքի ղեկավար Աղասի Ամիրյանը (3-րդ մրցանակ),

բ. ՀՀ Կոտայքի մարզի Բջնի գյուղական համայնքի ղեկավար Արմեն Մաթևոսյանը (2-րդ մրցանակ),

գ. ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտ գյուղական համայնքի ղեկավար Ժորա Մարտիրոսյանը (1-ին մրցանակ).

3) «Քաղաքապետարանի աշխատակազմի գեներային կազմի, կանանց և տղամարդկանց թիվը ծառայողների բոլոր կարգերում, գեներային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում» անվանակարգում հաղթող են ճանաչվել՝

ա. ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքային համայնքի ղեկավար Բագրատ Հարությունյանը (3-րդ մրցանակ),

բ. ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքային համայնքի ղեկավար Գագիկ Մաթևոսյանը (2-րդ մրցանակ),

գ. ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքային համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանը (1-ին մրցանակ)

4) «Գյուղապետարանի աշխատակազմի գեներային կազմի, կանանց և տղամարդկանց թիվը ծառայողների բոլոր կարգերում, գեներային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում» անվանակարգում հաղթող են ճանաչվել՝

ա. ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար գյուղական համայնքի ղեկավար Շահեն Շահինյանը (3-րդ մրցանակ),

բ. ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղական համայնքի ղեկավար Կամո Կակոյանը (2-րդ մրցանակ),

գ. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղական համայնքի ղեկավար Արծրուն Իգիթյանը (1-ին մրցանակ).

5) «Քաղաքային համայնքի ավագանու գեներային կազմը, ավագանու կազմում կանանց և տղամարդկան ներկայացվածությունը 2008-2012 թվականներին» անվանակարգում հաղթող են ճանաչվել՝

ա. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը (3-րդ մրցանակ),

բ. ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքային համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանը (2-րդ մրցանակ),

գ. ՀՀ Լոռու մարզի Թումանյան քաղաքային համայնքի ղեկավար Լևոն Զավարյանը (1-ին մրցանակ).

6) «Գյուղական համայնքի ավագանու գենդերային կազմը, ավագանու կազմում կանանց և տղամարդկան ներկայացվածությունը 2008-2012 թվականներին» անվանակարգում հաղթող են ճանաչվել՝

ա. ՀՀ Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավար Դավիթ Առուստամյանը (3-րդ մրցանակ),

բ. ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղական համայնքի ղեկավար Մելսիկ Ղազարյանը (2-րդ մրցանակ),

գ. ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանք գյուղական համայնքի ղեկավար Արա Սուքիասյանը (1-ին մրցանակ):

4. «Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում» ՀՀ վարչապետի 2013 թվականի մրցանակաբաշխության հայտարարում

(Ա. Խուդոյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4-րդ հարցով «Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար Ա. Խուդոյանը նշեց, որ հայտարարվել է նաև «Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում» ՀՀ վարչապետի 2013 թվականի մրցանակաբաշխություն, որի արդյունքները կամփոփվեն ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի տարեվերջյան նիստում: «Լավագույն հեռուստատեսային ռեպորտաժ», «Լավագույն ռադիոռեպորտաժ» և «Լավագույն տպագիր նյութ» անվանակարգերում հայտարարված մրցույթի նպատակը հաջողակ գործարար կանանց հետաքրքիր պատմությունների լուսաբանումն է:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ «Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում» մրցույթի նպատակներից մեկը առանց աղավաղումների հանրությանը ներկայացնելն է, իսկ այդ պատասխանատու գործը կատարում են լրագրողները: Այդ իսկ պատճառով նա հույս հայտնեց, որ լրագրողները ակտիվորեն կմասնակցեն լուսաբանման գործընթացին, և այս տարի առաջին անգամ կունենանք նաև «Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում» մրցանակի հաղթողներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ